Հավելված N 350
ՀՀ էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի
2019 թ.-ի հուլիսի 26-ի
N 636-Ա հրամանով

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆՇՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի (այսուհետ՝ Գրասենյակ) ապրանքային նշանների և աշխարհագրական նշումների փորձաքննության բաժնի (այսուհետ՝ Բաժին) պետ (ծածկագիրը՝ 23-Գ34.1-18.2-Ղ4-1)

1.2. Ենթակա և հաշվետու է

Բաժնի պետն անմիջական ենթակա և հաշվետու է Գրասենյակի ղեկավարին:

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ

Բաժնի պետին անմիջական ենթակա և հաշվետու են Բաժնի աշխատողները:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը:

1.5. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. Ապահովում է ազգային ընթացակարգով ապրանքային նշանների գրանցման համար ներկայացված փաստաթղթերի օրենսդրությամբ սահմանված պահանջներին՝ դրանք որպես ապրանքային նշանի գրանցման հայտ ընդունելու համար, համապատասխանության ստուգման, աշխարհագրական նշումների և ծագման տեղանունների գրանցման և (կամ) օգտագործման իրավունք տալու, ինչպես նաև երաշխավորված ավանդական արտադրանքի գրանցման համար ներկայացված փաստաթղթերի օրենսդրությամբ սահմանված պահանջներին՝ դրանք որպես աշխարհագրական նշման, ծագման տեղանվան, երաշխավորված ավանդական արտադրանքի գրանցման հայտ ընդունելու համար համապատասխանության ստուգման, հայտերի գրանցման և հայտի տվյալները համապատասխանաբար ապրանքային նշանների հայտերի հիմնապաշար կամ աշխարհագրական նշումների հայտերի հիմնապաշար կամ ծագման տեղանունների հայտերի հիմնապաշար կամ

երաշխավորված ավանդական արտադրանքի հայտերի հիմնապաշար մուտքագրման աշխատանքները,

2. Ապահովում է ազգային ընթացակարգով ներկայացված ապրանքային նշանների հայտերի նախնական փորձաքննության, ինչպես նաև աշխարհագրական նշումների, ծագման տեղանունների և երաշխավորված ավանդական արտադրանքի հայտերի փորձաքննության իրականացումը,

3. Ապահովում է ազգային ընթացակարգով ներկայացված ապրանքային նշանների հայտերի նախնական փորձաքննության, ինչպես նաև աշխարհագրական նշումների, ծագման տեղանունների և երաշխավորված ավանդական արտադրանքի հայտերի փորձաքննության արդյունքների հիման վրա համապատասխան ծանուցումների կամ որոշումների նախապատրաստումը,

4. Ապահովում է ազգային ընթացակարգով ստացված ապրանքային նշանների հայտերը, ինչպես նաև աշխարհագրական նշումների, ծագման տեղանունների և երաշխավորված ավանդական արտադրանքի հայտերը հրապարակման նախապատրաստելու հետ կապված աշխատանքները,

5. Ապահովում է ազգային ընթացակարգով ստացված ապրանքային նշանների գրանցման դեմ ներկայացված առարկությունների և դիտողությունների, ինչպես նաև աշխարհագրական նշումների, ծագման տեղանունների և երաշխավորված ավանդական արտադրանքի գրանցման դեմ ներկայացված առարկությունների քննարկումը և համապատասխան որոշման նախապատրաստումը,

6. Ապահովում է ազգային ընթացակարգով ստացված ապրանքային նշանների հայտերի, աշխարհագրական նշումների, ծագման տեղանունների և երաշխավորված ավանդական արտադրանքի ըստ էության փորձաքննության իրականացումը,

7. Ապահովում է ազգային ընթացակարգով ստացված ապրանքային նշանների հայտերի, աշխարհագրական նշումների, ծագման տեղանունների և երաշխավորված ավանդական արտադրանքի ըստ էության փորձաքննության արդյունքների հիման վրա համապատասխան ծանուցումների կամ որոշումների նախապատրաստումը,

8. Ապահովում է ապրանքային նշանների գրանցումը մերժելու կամ մասնակի գրանցման մասին որոշումների վերաբերյալ կրկնական փորձաքննություն անցկացնելու մասին ներկայացված դիմումների քննարկումը և համապատասխան որոշման նախապատրաստումը,

9. Ապահովում է ապրանքային նշանների, աշխարհագրական նշումների, ծագման տեղանունների, երաշխավորված ավանդական արտադրանքի հայտերը պետական գրանցամատյան ուղարկելու, հետ կանչելու և արխիվացնելու հետ կապված աշխատանքները,

10. Ապահովում է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Միջազգային բյուրոյից (այսուհետ՝ Միջազգային բյուրո) ստացված միջազգային գրանցումների մասին ծանուցումներով (այսուհետ՝ միջազգային գրանցումների ծանուցում) ապրանքային նշանների գրանցման դեմ ներկայացված առարկությունների և դիտողությունների քննարկումը և համապատասխան որոշման նախապատրաստումը,

11. Ապահովում է միջազգային գրանցումների ծանուցումներով փորձաքննության իրականացումը,
12. Ապահովում է միջազգային գրանցումների ծանուցումներով փորձաքննության հիման վրա համապատասխան որոշումների նախապատրաստումը և Միջազգային բյուրոյին ծանուցման հետ կապված աշխատանքները,
13. Ապահովում է միջազգային գրանցումների ծանուցումներով ապրանքային նշաններին իրավական պահպանությունը տալը նախնական մերժելու կամ մասնակի մերժելու մասին որոշումների վերաբերյալ կրկնական փորձաքննություն անցկացնելու մասին ներկայացված դիմումների քննարկումը և համապատասխան որոշման նախապատրաստումը,
14. Ապահովում է Մադրիդյան համաձայնագրի կամ նրա արձանագրության համապատասխան ներկայացված միջազգային հայտերի ստուգումը և Միջազգային բյուրո ուղարկումը.
15. Ապահովում է Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) ապրանքային նշանների և Միության ապրանքի ծագման տեղանունների հայտերի գրանցումը,
16. Ապահովում է Միություն ապրանքային նշանների և Միության ապրանքի ծագման տեղանունների հայտերի նախնական փորձաքննության իրականացումը,
17. Ապահովում է Միություն ապրանքային նշանների և Միության ապրանքի ծագման տեղանունների հայտերի նախնական փորձաքննության արդյունքների հիման վրա ծանուցումների կամ որոշումների նախապատրաստումը.
18. Ապահովում է Միության ապրանքային նշանների և Միության ապրանքի ծագման տեղանունների հայտերի Միության պաշտոնական կայքում հրապարակման հետ կապված աշխատանքները,
19. Ապահովում է Միության ապրանքային նշանի գրանցումը մերժելու վերաբերյալ մերժման հիմքերի առկայության մասին դիմումների քննարկումը և համապատասխան որոշման նախապատրաստումը,
20. Ապահովում է Միության ապրանքային նշանների և Միության ապրանքների ծագման տեղանունների փորձաքննության իրականացումը,
21. Ապահովում է Միության ապրանքային նշանների և Միության ապրանքների ծագման տեղանունների փորձաքննության արդյունքների հիման վրա համապատասխան ծանուցումների, որոշումների, ինչպես նաև Միության ապրանքային նշանների փորձաքննության արդյունքների մասին եզրակացությունների նախապատրաստումը,
22. Ապահովում է Հայաստանի Հանրապետությունում իրավական պահպանություն ստացած և իրավական պահպանություն տրամադրելու համար ներկայացված ապրանքային նշանների հիմնապաշարներում պատվերով որոնման իրականացումը,
23. Ապահովում է իրավաբանական և ֆիզիկական անձանցից ստացված ապրանքային նշաններին, աշխարհագրական նշումներին, ծագման տեղանուններին և երաշխավորված ավանդական արտադրանքին, Միություն ապրանքային նշաններին (սպասարկման նշանների) և Միության ապրանքի ծագման տեղանվանը վերաբերող դիմումների,

բողոքների ու առաջարկությունների քննարկման, ինչպես նաև պատասխանների, պարզաբանումների տրամադրման աշխատանքները,

24. Ապահովում է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությանը ապրանքային նշաններին, աշխարհագրական նշումներին, ծագման տեղանուններին, երաշխավորված ավանդական արտադրանքին վերաբերող տարեկան վիճակագրական տվյալների մասին հաշվետվությունների ներկայացումը:

Իրավունքները՝

- Գրասենյակի համապատասխան ստորաբաժանումից ստանալ ազգային ընթացակարգով ներկայացված ապրանքային նշանների, աշխարհագրական նշումների, ծագման տեղանունների և երաշխավորված ավանդական արտադրանքի գրանցման հայտերը.
- Բաժնի համապատասխան մասնագետներից պահանջել հայտերի նախնական փորձաքննության արդյունքները և դրա հիման վրա նախապատրաստած համապատասխան որոշումների նախագծերը.
- Բաժնի համապատասխան մասնագետից պահանջել հրապարակման ենթակա հայտերի փաթեթը.
- Բաժնի համապատասխան մասնագետներից պահանջել ըստ էության փորձաքննության արդյունքները և դրա հիման վրա նախապատրաստած համապատասխան որոշումների նախագծերը.
- Բաժնի համապատասխան մասնագետներից պահանջել ապրանքային նշանների գրանցման դեմ ներկայացված առարկությունների և դիտողությունների քննարկման արդյունքները և դրանց հիման վրա նախապատրաստած համապատասխան որոշումների նախագծերը, ինչպես նաև աշխարհագրական նշումների, ծագման տեղանունների և երաշխավորված ավանդական արտադրանքի գրանցման դեմ ներկայացված առարկությունների քննարկման արդյունքները,
- Բաժնի համապատասխան մասնագետներից ստանալ միջազգային հայտի ստուգման արդյունքները,
- օգտվել համապատասխանաբար ապրանքային նշանների հայտերի հիմնապաշարից, աշխարհագրական նշումների հայտերի հիմնապաշարից, ծագման տեղանունների հայտերի հիմնապաշարից, երաշխավորված ավանդական արտադրանքի հայտերի հիմնապաշարից, ինչպես նաև ապրանքային նշանների միջազգային գրանցումների հիմնապաշարներից.
- պահանջել իրավաբանական և ֆիզիկական անձանցից ստացված ապրանքային նշաններին, աշխարհագրական նշումներին, ծագման տեղանուններին և երաշխավորված ավանդական արտադրանքին, Միություն ապրանքային նշաններին (սպասարկման նշանների) և Միության ապրանքի ծագման տեղանվանը վերաբերող դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկման աշխատանքների ընթացքում առաջացած հարցերի վերաբերյալ պարզաբանումներ, կազմակերպել աշխատանքային քննարկումներ:

• ստանալ անհրաժեշտ տեղեկություններ տեղեկանքների, հաշվետվությունների և այլ գրությունների նախապատրաստման աշխատանքների վերաբերյալ:

Պարտականությունները՝

• բաշխել ապրանքային նշանների և սպասարկման նշանների (այսուհետ՝ ապրանքային նշաններ), աշխարհագրական նշումների, ծագման տեղանունների, երաշխավորված ավանդական արտադրանքի, Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) ապրանքային նշանների և Միության ապրանքների ծագման տեղանունների հայտերը՝ ըստ համապատասխան բնագավառների.

• հետևել ազգային ընթացակարգով ներկայացված ապրանքային նշանների հայտերի օրենքով սահմանված ժամկետում Բաժնի համապատասխան մասնագետների կողմից նախնական փորձաքննության իրականացմանը, ինչպես նաև աշխարհագրական նշումների, ծագման տեղանունների և երաշխավորված ավանդական արտադրանքի հայտերի փորձաքննության իրականացմանը, ստուգել փորձաքննության արդյունքները և դրանց հիման վրա կայացնել հայտերը հրապարակելու մասին որոշումները,

• Բաժնի համապատասխան մասնագետի հետ քննարկել ազգային ընթացակարգով ստացված ապրանքային նշանների գրանցման դեմ ներկայացված առարկությունները և դիտողությունները, հայտատուի կողմից ստացված նկատառումները, ինչպես նաև աշխարհագրական նշումների, ծագման տեղանունների և երաշխավորված ավանդական արտադրանքի գրանցման դեմ ներկայացված առարկությունները և քննարկման արդյունքների հիման վրա կայացնել համապատասխան որոշումներ,

• հետևել ազգային ընթացակարգով ներկայացված ապրանքային նշանների հայտերով, աշխարհագրական նշումների, ծագման տեղանունների, երաշխավորված ավանդական արտադրանքի գրանցման հայտերով Բաժնի համապատասխան մասնագետների կողմից օրենքով սահմանված ժամկետում ըստ էության փորձաքննության իրականացմանը, ստուգել փորձաքննության արդյունքները, դրանց հիման վրա կայացնել համապատասխան որոշումները և ներկայացնել Գրասենյակի ղեկավարի հաստատմանը,

• Բաժնի համապատասխան մասնագետի հետ քննարկել ապրանքային նշանների գրանցումը մերժելու կամ մասնակի գրանցման մասին որոշումների վերաբերյալ կրկնակաև փորձաքննություն անցկացնելու մասին դիմումները, քննարկման արդյունքների հիման վրա կայացնել համապատասխան որոշումը և ներկայացնել Գրասենյակի ղեկավարի հաստատմանը,

• հետևել միջազգային գրանցումների ծանուցումներով Բաժնի համապատասխան մասնագետի կողմից օրենքով սահմանված ժամկետում ըստ էության փորձաքննության իրականացմանը, ստուգել փորձաքննության արդյունքները, կայացնել համապատասխան որոշումները և որոշումներն էլեկտրոնային հարթակի միջոցով ուղարկել Միջազգային բյուրո,

• Բաժնի համապատասխան մասնագետի հետ քննարկել միջազգային գրանցումների ծանուցումներով ստացված ապրանքային նշանների գրանցման դեմ ներկայացված առարկությունները և դիտողությունները, ինչպես նաև հայտատուի կողմից ստացված

նկատառումները, քննարկման արդյունքների հիման վրա կայացնել համապատասխան որոշում և ներկայացնել Գրասենյակի ղեկավարի հաստատմանը,

• հետևել միջազգային հայտերի օրենքի պահանջների համապատասխանության օրենքով սահմանված ժամկետում Բաժնի համապատասխան մասնագետի կողմից ստուգման աշխատանքների իրականացմանը և էլեկտրոնային հարթակի միջոցով ուղարկել Միջազգային բյուրո,

• հետևել Միություն ապրանքային նշանների և Միության ապրանքի ծագման տեղանունների հայտերի օրենքով սահմանված ժամկետում Բաժնի համապատասխան մասնագետների կողմից նախնական փորձաքննության իրականացմանը, ստուգել փորձաքննության արդյունքները և դրանց հիման վրա կայացնել համապատասխան որոշում,

• հետևել Միության ապրանքային նշանների և Միության ապրանքների ծագման տեղանունների Բաժնի համապատասխան մասնագետի կողմից օրենքով սահմանված ժամկետում փորձաքննության իրականացմանը, ինչպես նաև Միության ապրանքային նշանի գրանցումը մերժելու վերաբերյալ մերժման հիմքերի առկայության մասին դիմումների քննարկմանը, ստուգել համապատասխան արդյունքները և դրանց հիման վրա տալ համապատասխան եզրակացություններ կամ որոշումներ,

• քննարկել իրավաբանական և ֆիզիկական անձանցից ստացված ապրանքային նշաններին, աշխարհագրական նշումներին, ծագման տեղանուններին և երաշխավորված ավանդական արտադրանքին, Միություն ապրանքային նշաններին (սպասարկման նշանների) և Միության ապրանքի ծագման տեղանվանը վերաբերող դիմումները, բողոքները ու առաջարկությունները, ինչպես նաև տրամադրել պատասխանները, պարզաբանումները,

• Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությանը ներկայացնել ապրանքային նշաններին, աշխարհագրական նշումներին, ծագման տեղանուններին, երաշխավորված ավանդական արտադրանքին վերաբերող տարեկան վիճակագրական տվյալների մասին հաշվետվությունները:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձառություն

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ իրավունքի բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ

3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Փաստաթղթերի նախապատրաստում
3. Կոնֆլիկտների կառավարում
4. Ծառայությունների մատուցում
5. Բողոքների բավարարում
6. Ժամանակի կառավարում
7. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում

4. Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի, այլ պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ իր իրավասությունների շրջանակներում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ կամ մասնակցում է այդ խնդիրների լուծմանը: